ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՋԵԿ ԳԱԼԱՅՃՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՃԷԳ ԳԱԼԱՅՃԵԱՆ, ՈՐ Ի ԿԱԼԻՖՈՌՆԻԱ, ԱՄՆ

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու գնահատանքն ենք յղում Ձեզ՝ ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմին մատուցած Ձեր եկեղեցաշէն ու ազգօգուտ ծառայութեանց համար:

Մեծարգոյ պրն Գալայճեան,

Մեծապէս ուրախ ենք, որ յոբելեանական 2001 թուականին ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմ կատարած Հովուապետական Մեր անդրանիկ այցելութեան ընթացքին առիթ ունեցանք անձնապէս ճանաչելու Ձեզ, ականատես լինելու թեմական կեանքից ներս Ձեր ասպուածահաճոյ իրագործումներին, որոնք բարի համբաւ են բերել Ձեզ եւ Գալայճեան ընտանիքին:

Առանձնակի գոհունակութեամբ ենք անդրադառնում ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի Առաջնորդարանի Տիգրանեան համալիրի սրահի կառուցման հովանաւորութեանը Ձեր կողմից, որը, ի սէր եւ հարգանք Ձեր բարեպաշտ ծնողաց, պիտի կոչուի «Նազարէթ եւ Սիմա Գալայճեան Սրահ»: Շնորհիւ Ձեր ազնիւ յանձնառութեան ու մեծագումար նուիրատուութեան, սրահը թեմի հովանու ներքոյ այժմ եւ ընդմիշտ արդիւնաւորապէս պիտի ծառայի մեր ժողովրդին՝ նպաստ բերելով Առաքելական մեր Մայր Եկեղեցու եւ Տիրախնամ թեմի շինութեանն ու պայծառութեանը:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնները Մայր Եկեղեցուն, սիրով ընդառաջում ենք բարեջան Ձեր առաջնորդի ազնիւ խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ ամենաբարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Ամենակալ Աստծուց, որ Իր հանապազ օրհնութեան ներքոյ պահի ու պահպանի Ձեզ, Ձեր մայրիկին, Ձեր ազնիւ Տիկնոջն ու զաւակներին՝ զորավիգ լինելով բարի ու հայրենանուէր Ձեր բոլոր իրագործումներում:

Այլեւ աղօթում ենք, որ Երկնաւոր Հայրը իր երանաւետ բարձունքներում խաղաղութեան մէջ ընդունի հանգուցեալ Ձեր հայրիկի լոյս հոգին՝ դասելով «ընդ սուրբս եւ ընդ սիրելիս անուան իւրոյ»:

Թող ընկաւնեկան Ձեր հարկը շնորհընկալը լինի Հարուցեալ Տիրոջ օրհնութեանն ու առատ ողորմութեանը:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 30-ն Մարտի
Ցամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 152

ՀԱՅԿ ԱՄՍ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ԹՈՒՂԹԱՄԵՆՏԻՆ ԳՐԵԳՈՐԵԱՆ
ԱԿԱԴԵՄ. ՀՕՐ